Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Արժեքային համակարգի ձևավորումը «Մայրենի», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաների դասավանդման ընթացքում

Կատարող՝ Մարինե Աբրահամյան
Դպրոց՝ Խ. Դաշտենցի թ. 114 ավագ դպրոց
Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Կազմակերպություն՝ «Կրթություն առանց սահմանների» Հ/Կ
Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
Արժեք- կարևորություն- օգուտ 5
Մարդ լինել 7
Օրինակ և փորձություն 11
Վերջնարդյունքներ 15
Ազգասիրությունը և հայրենասիրությունը ավագ դպրոցում 16
Մեկ դասաժամ՝ հայ գրականությունից 18

Ներածություն

Եթե դպրոցներում դասավանդվեին միայն մայրենին և գրականությունը, բավարար կլիներ մարդուն դաստիարակելու բարձր, առաքինի հատկանիշներով, կերտելու առողջ մտածելակերպով ու վերլուծություններով անհատների և այդպիսով ապահովել հասարակության բարձր մակարդակը։

Շատերս հաճախ շփոթում ենք «դաստիարակություն» և «կրթություն» հասկացությունները և մտածում ենք, որ երեխային դաստիարակության ենք տվել, երբ նրան ստիպել ենք սովորել այս կամ այն առարկաները։ Ահա պատճառը, թե ինչու շատ ծնողներ տարիներ անց հիասթափություն են ապրում իրենց սեփական երեխաներից։

Ուրեմն՝ ինչպե՞ս ձևավորել անհատներ՝ ճիշտ արժեհամակարգով ….

Այս աշխատության մեջ ներառված են միմիայն իմ պատկերացումներն ու հետազոտությունները։ Այստեղ արժեհամակարգի ձևավորման գործոններն են՝ այն կարևորագույնը, որոնցով պիտի իրագործվի մեր առաքելությունը։ Որպես նպատակային միջոց ընտրված է մայրենին, գրականությունն ու հայ գրականությունը, սակայն սրանք կմնան առարկաների անվանումներ, եթե չլինի այն անձը, ով իր ճիշտ պատկերացումներով ու մեծ նվիրումավ չկատարի իր գործը։

Ինչպես Գորկին է ասում. «Երեխաներին սիրել՝ դա հավնել է կարողանում։ Բայց ահա նրան դաստիարակել կարողանալ պետական մեծ գործ է, որը պահանջում է տաղանդ և կյանքի լայն իմացություն»։

Հասհանալի է, որ ես կարևորել եմ ուսուցչին. նա է լինելու այն զինվորը, ով պիտի պայքար մղի, հաղթահարի խոչընդոտներ, դեմ գնա շատ ռիսկերի, բայց հասնի իր նպատակին։

Եվ քանի որ համոզմունքներս թույլ են տալիս հավատալու, որ անպայման կհասնի, վստահորեն տվել եմ այն վերջնարդյունքները, որոնք ակնկալվում են ունենալ յուրաքանչյուր ավարտական դասարանի ավարտին։

Երեխան նախևառաջ իր ձևավորումը ստանում է ընտանիքում։ Ընտանիքը փոքրիկ հասարակություն է, որի ամբողջությունից կախված է մարդկային ամբողջ մեծ հասարակության անվտանգությունը։ Ու թեև ուսումնասիրության հիմնական

շեշտը ուղղված է դպրոցի դաստիարակությանը, հարկ եմ համարել կարևորել ընտանիքի հիմնավոր դերը, ինչու չէ, այն ինչ- որ առումով հանդիսացնելով նաև խոչընդոտ՝ ճիշտ դաստիարակման ճանապարհին։

Որպես օգտագործված գրականություն քննարկման եմ դրել դպրոցական դասագրքեր և իմ ասելիքը հիմնավորել եմ դասի օրինակներով։

Արժեք- կարևորություն- օգուտ

Պատահական չէ, որ բնությունը չի սահմանել ցանկացած իրի կամ երևույթի արժեքը. այն գնահատվում է տվյալ առարկայի կամ երևույթի կարևորությունից։

Տարբեր մարդկանց մոտ արժեքների գերակայությունը տարբեր է։

«Անգետը իրերին մեծ արժեք է տալիս, քան իրականում ունեն բնության մեջ, և սխալ պատկերացումներ է կազմում բարու և չարի մասին։ Արդյունքում նա ձգտում է հասնել նրան, ինչն իրեն բարիք է թվում՝ առողջության, փառքի, հարստության, սակայն իր ձգտումների մեջ նա անցնում է բնության կողմից գծված որոշակի սահմանը, այսինքն ընկնում է իր կրքերի և պատկերացումների պատճառով ստեղծված թակարդը» /Պալինա Գաջիկուրբանովա/

Թե ինչն իր կյանքում առավել կամ պակաս կարժևորի մարդը, նրան կուղղորդի իր անցած ճանապարհը անմիջապես ծնունդից։ Արժեհամակարգը ձևավորվում է նախնառաջ ընտանիքում, այնուհետև միջավայրում և ապա պայքարի մեջ մտնում դպրոցում։ դպրոցն ինչ-որ առումով պայքար է տանում լավ մարդու, ճիշտ քաղաքացու դաստիարակման գործում։

Երեխաներին զուգընթաց դպրոցը մեծ դեր է ստանձնում երիտասարդ մայրերի հետ զբաղվելու, ակամայից նրանց այսպես ասած «դաստիարակությամբ» զբաղբելու գործում։ Որքանով է դա անհրաժեշտ. Դեռևս Ժան Պոլն ասել է. «Տվե՛ք մեզ լավագույն մայրեր, և մենք կլինենք լավագույն մարդիկ»։

Ահա իմ տեսակետը. ունե՞նք դրական հատկանիշներով մայրեր, ովքեր քայլում են քեզ հետ զուգընքաց, ովքեր վստահում ու մեծարում են քեզ, ուրեմն կհասնենք հաջողության ու կկարողանանք կերտել մեր ուզած անհատին։

Ժ. Ժ. Ռուսոն դիմելով ծնողներին՝ ասել է.

—Արդյո՞ք գիտեք, թե որն է ձեր երեխային դժբախտ դարձնելու ամենահաստատ ձևը. դա նրան ոչ մի բանում չմերժելուն ընտելացնելն է։

Արժեքը վաղ հասակում հարկավոր է ձևավորել իրերի և երևույթների կարևորությամբ։ Մի՛ օգնեք երեխային, քանի դեռ նա չի հասկացել, որ դա ոչ թե պարտականություն է, այլ արժեք։

Թե ինչպես է ձևավոնվում արժեքը ընտանիքում մինչդպրոցական տարիքը, շատ կարևոր է. այստեղից մենք գործ ունենք արդեն ձևավորված տարբեր փոքրիկ անհատների հետ, որոնց պիտի սնուցենք մեր պատկերացումներով և մեր գործիքներով։

Այդ սնուցումը սկսվում է դպրոցի մուտքից, միջավայրից, առաջին ուսուցչուհու կերպարից, կեցվածքից, ժպիտից, հույս ներշնչող շոյանքներից։ Արժեհամակարգի ձևավորումը առաջին հերթին օրինակ է, վստահելի օրինակ, ումից կարելի է սովորել ազնվություն, բարություն… Ում կարելի է կուրորեն վստահել, և արդեն ձևավորված վատ հատկանիշները փոխել լավի։

Հավատացած եղեք, որ մարդն իր ամբողջ կյանքում երևույթները արժևորում է հենց այս տարիներին սնուցված դասերով։

Կա պետական չափորոշիչ, կան ծրագրեր, կան դասագրքեր…

Կային ժամանակներ, որ այս ամենը չկար, և հասարակությունը զուրկ չէր մարդկային լավագույն հատկանիշներով օժտված մարդկանցից։

Հավատացե՛ք այս ամենը ոչինչ է, եթե չկա լավագույն արժեքներն իր մեջ կրող և այդ արժեքներն աշակերտներին պատրաստակամ փոխանցող ուսուցիչը։

Արժեհամակարգի ձևավորման համար հիմնավոր դերը պատկանում է ՄԱՅՐԵՆԻԻՆ. այն վերանում է սովորական առարկա լինելուց և անուղղակի ճանապարհներով կատարում իր գործը՝ կերտելով մեր ակնկալած մարդուն։

Իսկ ի՞նչ է ակնկալվում….

Ասելիքս հիմնավորեմ օրինակներով, որոնք բերված են դասագրքերից։ Սկսենք Դավիթ Գյուրջինյանի և Նարինե Հեքեքյանի հեղինակած 4-րդ դասարանի մայրենիից։ Այս դասագիրքը կարծես կյանքի դպրոց է, որը ստեղծված է՝ ազգային և համամարդկային արժեքների կրողը դարձնելու յուրաքանչյուր անհատի։ Դասագիրքը բաղկացած է 5 թեմատիկ բաժիններից։ Առաջինը կոչվում է «Ու՞մ նվիրեմ իմ սիրտը». սա այն է, ինչ մեզ հարկավոր է. կենտրոնում մարդն է՝ իր կողմնորոշումներով, իր սիրո դրսևորումներով, և երեխան թեմայի ավարտին հաստատ գիտի, թե իր սրտի անկյունում ում և ինչին տեղ հատկացնի։

Ես պատրաստել եմ ամփոփման դաս՝ բաժնին պատկերավոր ծանոթացնելու համար և իմ դասն անվանել եմ՝ «Մարդ լինել», քանի որ յուրաքանչյուր դաս մի նոր

մարդկային լավագույն հատկանիշ է ավելացնում փոքրիկների կյանքում՝միևնույն ժամանակ մերժելով վատն ու արատավորը։

Մարդ լինել

Դասի տիպը՝ ամփոփիչ

Թեման՝ «Ու՞մ նվիրեմ իմ սիրտը»

Ժամաքանակը՝ 1դասաժամ

Նպատակը՝ Վստահ լինել, որ քո աշակերտներին սնուցել ես լավագույն հատկանիշներով։

Դասի ընթացքը

Խթանման փուլ- Այսօր մենք ամփոփում ենք մայրենիից անցած այն բաժինը, որը կոչվում է «Ում նվիրեմ ին սիրտը»։ Քանի որ մայրենին մեզ հնարավորություն է տալիս հղկվելու, կատարելագործվելու, օժտվելու բարձր հատկանիշներով, ուզում եմ իմի բերենք այն լավագույնը, որ ձեռք ենք բերել այս բաժինը ուսումնասիրելիս։

Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ կենտրոնում մարդն է՝ իր սիրո բոլոր դրսևորումներով, կարողացանք վեր հանել այն վատն ու արատավորը, որ կա կյանքում և մեր մերժել դրանք։

- Հիշելով մեր անցած ստեղծագործությունները՝ ի՞նչ լավագույն հատկանիշներ կթվեք, որոնց կրողները դարձանք մենք այս ընթացքում։

Թվարկվածը կգրվի գրատախտակին.

Բարություն

Ընկերասիրություն

Երախտագիտություն

Աշխատասիրություն

Հոգատարություն

Հայրենասիրություն

Մարդասիրություն

Կշռադատման փուլ

-Ո՞ր ստեղծագործությունն է, որ բարության կատարյալ խոսք է ասում։

-«Լավ ընկերը» /ներկայացնում է աշակերտներից մեկը/

Այո՛, բաժինը սկսվում է աստվածաշնչյան «Բարի սամարացու» առակի հիման վրա գգրված «Լավ ընկերը» պատումով, որում արծարծվում է այն վեհ գաղափարը, որ հարկավոր է ձեռք մեկնել օգնության կարիք ունեցող նույնիսկ անծանոթ մարդուն։

Երեխաները գրատախտակին կփակցնեն իրենց կողմից պատրաստած ասույթներ այց թեմայի շուրջ.

«Ընկերը նա է, ով քո սիրո և օգնության կարիքն ունի, ընկերը նա է, ով սիրում ու օգնում է քեզ»։

Կյանքում ամենից սրբազան զգացմունքը ծնողների նկատմամբ սերն ու երախտագիտությունն է։ Հովհ. Շիրազի «Հայրս», և Դիանա Գրիգորյանի «Մոր ժպիտը» բանաստեղծությունները նվիրված են հոր և մոր նկատմամբ դրսևորվող որդիական սիրո գովերգմամբ։

Բանաստեղծությունները լսելուց հետո կփակցվեն հետևյալ ասույթները.

Մոր սիրտը մարդկության սիրտն է, տիեզերքի սիրտը։

Կա մի գեղեցիկ էակ, որին միշտ պարտք ենք. դա մայրն է։

Մոր սիրտը հրաշքների անսպառ աղբյուր է։

Ծնողի սիրուց ավելի սուրբ և ավելի անշահախնդիր ոչինչ չկա։

- Ի՞նչ է երախտագիրությունը , ու՞մ ենք համարում երախտագետ։
- Ինչպե՞ս ենք անվանում անշնորհակալ մարդուն։

Ինչպես ասում է ասացվածքը. «Մենք ոչ մի բանի համար այնպես շնորհակալ չենք, ինչպես շնորհակալության համար»։

Իսկ սերը ծնողների հանդեպ բոլոր առաքինությունների հիմքն է։

«Մոր նամակը սրտառուչ խոսք է հոր հանդեպ երեխայի վերաբերմունքի մասին։ Եվ ստեղծագործությունը ընդհանրացվում է հետևյալ եզրահանգումներով.

«Խրատը դեղի նման է, որքան դառը, այնքան բուժիչ»։

«Ծնողի խստությունը բուժիչ դեղ է, նրա մեջ ավելի շատ քաղցրություն կա, քան դառնություն»։

Սիլվա Կապուտիկյանի «Տղային» բանաստեղծությունը սիրո հակառակ դրսևորման մասին է. մայրը գնահատուն է ուդուն, նրա մեջ տեսնում ազնիվ, բարի, հոգատար, թույլին թիկունք կանգնող մարդուն: Բանաստեղծությունը մարդ լինելու և կյանքում մարդ մնալու մասին է: Ստեղծագործությունը կընդհանրացնի այն գաղափարախոսությունը, որ գիտելիքները մարդուն կշիռ են տալիս իսկ արարքները՝ փայլ:

-Ի՞նչ կարելի է ասել մարդկային արարքների մասին:

-Միայն այն ժամանակ մարդ կդառնաս,երբ սովորես ուրիշների մեջ տեսնել մարդուն:

-Ոչ ոք չի կարող դատել ուրիշների մասին, քանի դեռ չի սովերել դատել ինքն իր մասին:

-Ով չի ուսումնասիրել մարդուն ինքն իր մեջ , երբեք չի հասնի մարդկանց մասին խոր իմացության:

-Որ ստեղծագործությունն է սերմանում աշխատասիրություն, բացահայտում, որ աշխատանքի պտուղները ժառանգում են հաջորդ սերունդները։

-«Թագավորն ու հողագործը»։

Եզրահանգումներ.

«Աշխատանքը քաղցի հայրն է, մարդասիրության պապը, առողջության նախապապը»։

«Անգործությունը ոչ միայն ծնում է տգիտություն, այլև հիվանդության պատճառ է դառնում»։

Երկու նյութ նվիրված է մարդու բարեկամներին՝ կենդանիներին և բույսերին։ Նրանց նկատմամբ ուշադրությունն ու հոգատարությունը ևս մոր պարտքն է։

Խնամքով ու հոգատարությամբ պետք է վերաբերվել այն ամենին, ինչ բնությունը պարգևել է մեր իսկ բարօրության համար։

«Ու՞մ նվիրեմ իմ փոքրիկ սիրտը» ստեղծագործության հերոսը, որի անունով էլ կոչված է բաժինը, մեզ պատմում է, թե ովքեր և ինչեր կարող են տեղ գտնել կամ չգտնել իր մաքուր սրտում։

Իսկ լավ մարդը միաժամանակ ապրում է հազար ու մի տեղ, հազարավոր սրտերում։

Արդյունքում երեխաները իրենք կլրացնեն իրենց պատկերացրած սիրտը.

Օրինակ և փորձություն

Արարք ցանեցե՛ք սովորույթ կինձեք, սովորույթ ցանեցե՛ք, բնավորություն կինձեք, բնավորություն ցանեցե՛ք և դուք ճակատագիր կինձեք։

Թեքերեյ

Մարդու մեջ հաստատուն ու հուսալի է միայն այն, ինչը նրա բնավորության մեջ ներծծվել է կյանքի առաջին շրջանում։ Ահա թե ինչու կարևորեցի արժեհամակարգի ձևավորման գործընթացը այս տարիքում։ Այս տարիների ներմուծած հատկանիշները կարծր են, և մնում է հետագայում դրանք փորձության ենթարկել։

Երեխայի վարքագիծը կրկնօրինակում է, պատճենում այն մարդկանցից, ովքեր անմիջական ազդեցություն ունեն նրանց վրա։ Մեր դերը առաջնահերթություն ունենալն է՝ մեր լավ օրինակը նրանց մեջ ամրացնելու համար։ Օրինակ են, ինչ խոսք, նրանց դասագրքի հերոսները. մնում է միայն այն շոշափելի դարձնել. լավը սիրել տալ, իսկ վատը՝ մերժել։

Ինձ համար արժեհամակարգը գլխավորում են սերն ու հավատը։ Առանց սիրելու մարդը թերի է՝ անընդունակ որևէ գործ կատարելու։ Հավատը շարժիչ ուժ է՝ ապրելու, ստեղծելու։ Եթե երեխան զգում է քո սերը, նա սովորում է քեզնից։ Եթե տեսնում է, որ հավատում ես իր ուժերին, ջանում է արդարացնել քո հույսերը։

Մարդը պիտի նաև սովորի սիրել իրեն՝ արժևորելով իրեն, իր մարդկային հատկանիշները։

«Մարդու անունն ու գործը» բաժինն ամբողջությամբ նվիրված է մարդու անվանն ու գործին, նրա բարոյական արժեքներին, լավ ու վատ, բարի ու չար գործերին։ Այս բաժնի ստեղծագործություններում մենք մերժում ենք մեծամտությունը, նախանձը, ստախոսությունը և նման հատկանիշներ, որոնք կործանում են մարդուն։ Այստեղ արտահայտված է այն գաղափարը, որ մարդուն պետք է արժևորել իր կատարած գործերով։ Մարդը պետք է ապրի այնպես, որ արժեք ներկայացնի իրենից, պիտանի, օգտակար լինի հասարակությանը։

«Չորս խնձոր» հեքիաթում արտահայտվում է մարդկությանը օգտակար լինելու գաղափարը։

Այս դասը կարելի է անցկացնել մի փոքր խաղային տարբերակով, միևնույն ժամանակ՝ կանխագուշակության եղանակով. Առաջին մասի ընթերցումից հետո, որտեղ պատկերված են 4խնձորները, երեխաները կբաժանվեն 4 խմբի՝ իրենց ներկայացնելով համապատասխան խնձորների դերում։ Այնուհետև կմտորեն, թե ինչ կորող է լինել իրենց հետ։ Յուրաքանչյուր խմբի կանխագուշակումները միացնելով՝ կստանանք աղյուսակ։

Գուցե 4-րդ խնձորի դերը ոչ ոք չընտրի, բայց հաստատ պատմության 2-րդ մասը լսելուց հետո բոլորն էլ կցանկանան լինել որպես 4-րդ խնձոր։

Դա Ոսկեշողիկն էր, ով զուրկ էր արևի ճառագայթներից, գտնվում էր ծառի ամենացածր ճյուղին։ Նրա մեջ որդ կար։ Խեղճը ճյուղի վրա դողում էր։ Բերքահավաքին նրան ոչ ոք չնկատեց և չքաղեց։

Ոսկեշողիկի կորիզները մնացին հողի մեջ։ Հողը նրանց գրկեց, տաքացրեց։ Գարնանը կորիզներից կանաչ ծիլեր դուրս եկան, որոնք պիտի դառնան չորս նոր խնձորենի։

Այս դասը մեզ կապում է արվեստի հետ, և մենք երկրորդ դասաժամին հատված հատկացրինք կերպարվեստի տեսակներին, քանի որ խոսք էր գնացել նատյուրմորտի մասին։ Խմբավորվեցին բերված նկարներն՝ ըստ տեսակների։



Նատյուրմորտ ինքնադիմանկար բնանկար պատմական





Դեկորատիվ անիմալիստական ճարտարապետական ծովանկար դիմանկար

կենցաղային բնանկար

Կապ հաստատվեց կերպարվեստ առարկայի հետ և ստեղծվեց սեփական ցուցահանդեսը:

Դատարկ մորթին ուռչում է քամուց,
դատարկ գլուխը՝ պարծենկոտությունից:

Մեծամտությունն առաջանում է իր մասին չափազանց բարձր և ուրիշների մասին չափազանց ցածր կարծիքից: Սա է սովորեցնում երեխաներին «Սեխի թուփն ու ընկուզենին» բանաստեղծությունը:

Լեոնարդո դա Վինչիի «Դեզձենին» հեքիաթը ոչ միայն հնարավորություն կտա մերժելու նախանձը, անխոհեմությունը, այլև առիթ կհանդիսանա առնչվելու, ճանաչելու գիտնական, փիլիսոփա, գրող, արվեստագետ, նկարիչ Լեոնարդո դա Վինչիի հետ:

Ահա 1 դասաժամ նվիրվում է նրան. խմբային աշխատանքներով ներկայացվում են.

1-ին խումբ- փիլիսոփայական մտքերը. օրինակ՝ «Խղճուկ է այն աշակերտը, որը չի գերազանցել իր ուսուցչին»:

2-րդ խումբ- լեոնարդո դա Վինչին գիտնական



3-րդ խումբը կներկայացնի Լեոնորդո դա Վինչիին՝ որպես հանճարեղ և խորհրդավոր գեղանկարչի, և կպատմի նկարների մասին։

Ահա և այսպես մայրենին մեզ կապում է այն ամենի հետ, ինչը կա, գոյություն ունի մեր կյանքում։

Համո Սահյանի «Գետը» բանաստեղծությունը մեզ այլաբանորեն ներկայացնում էգետը, որն իր գոյության ողջ ընթացքում բարիք է գործում։ Այդպես էլ մարդն իր կյանքի ամբողջ ընթացքում և անգամ վերջին հանգրվանում օգտակար պիտի լինի մարդկանց և հայրենիքին։

Այս ստեղծագործությունից հետո ես առաջարկում եմ դիմել մի հնարքի. հատկացնել արկղիկ և պարբերաբար այնտեղ դնել գրություններ, որոնցում կլինեն իրենց կատարած գործերը՝ ինչպես լավ, այնպես էլ վատ, որի համար իրենք արդեն զղջացել են և պատրաստ են շտկել։ Այս գործողությունը կդառնա նրանց մոտ սովորություն՝ իրենց արածների համար հաշվետու լինելու և կվերածվի սովորույթի՝ հանդես գալու լավ արարքներով։

Ես բերել եմ ընդամենը մի քանի թեմաների օրինակներ, բայց երբ ավարտվի ամբողջ դասընթացը, վստահորեն կարելի է տալ արժեքային համակարգի ամփոփ պատկերը։ Յուրաքանչյուր դպրոց, համարելով իրար հաջորդող մակարդակ, ներկայացնեմ դինամիկան, այնուհետև՝ ընդհանուր բովանդակային կետերը։

Առաջին մակարդակ	Երկրորդ մակարդակ	Երրորդ մակարդակ
Ճանաչի, տարբերակի,արժևորի, դրսևորվի	Կրողը լինի և գործի օրինակներով։ Ունենա սեփական հայեցակետը։	Դրական օրինակ լինի կրտսեր սերնդի համար Անի առաջարկություններ։

Վերջնարդյունքներ

Վերջնարդյունքները տրվում են ըստ մակարդակների հաջորդականության.

- Ճանաչի լավ և վատ արարքը։
- Կարևորի մարդասիրությունը, ազնվությունը, սրտացավությունը, ուրիշին օգնելու ձգտումը. ձգտի ազնիվ ու մարդկային լինել իր արարքների մեջ։
- Մերժի բացասական հատկանիշները, կարևորի դրական գծերը, սովորի գործնականում դրսևորել դրական հատկանիշները։
- Իր մեջ խոստովանի վատ արարքը և փորձի շտկել այն։
- Գնահատի գրքի դերը, սիրով ու խնամքով վերաբերվի գրքին։
- Ճանաչի ազգային արժեքներն ու մշակութային գանձերը։
- Արժևորի համախմբվածությունն ու միասնությունը։
- Վերաբերմունք արտահայտի անպատժելիության նկատմամբ։
- Կարևորի ուպիշին հարգելու հատկանիշը։
- Գնահատի արդարամտությունը։
- Սովորի ոչ թե խոսքով, այլ գործով ապացուցել իր կարողություններն ու հնարավորությունները։
- Վերաբերմունք արտահայտի մարդկային բացասական և դրական հատկանիշների նկատմամբ։
- Սովորի ճիշտ գնահատել սեփական հատկանիշներն ու արարքները։
- Կարևորի գրականության դերը մարդու կյանքում։
- Գնահատի մարդկության ստեղծած մնայուն արժեքները։
- Հոկի սեփական լեզվամտածողությունը, բառապաշարը։
- Ընդլայնի մտահորիզոնը։

- Ծանոթանա ժողովրդական բանահյուսության նմուշներին և հասկանա դրանց արժեքը։
- Կարևորի իրեն շրջապատող մարդկանց։
- Տերը դառնա և պահպանի մեր պապերի թողած ժառանգությունը։

Ազգասիրությունը և հայրենասիրությունը ավագ դպրոցում

Ավագ դպրոցում հայ գրականության ուսուցումը գրականության համակարգված պատմությունն է, որի նպատակն է՝

- Ամբողջացնել հիմնական դպրոցում հաղորդված մասնական գրտելիքները։
- Դաստիարակել գիտակից և արժանապատիվ սեր հայրենի մշակույթի նկատմամբ։
- Հարստացնել, հղկել հոգևոր-բարոյական, մտավոր արժեքները։
- Մշակել գրական երկն ընթերցելու, վերլուծելու, ինքնուրույն գնահատելու հմտությունները։
- Հարկավոր է ձերբազատվել դասագրքային բանաձևերց և պարտադրող վերլուծություններից։

Ի՞նչն է ստեղծում լավ հնարավորություն՝ ճանաչելու հայրենիքը, իմանալու նրա անցյալի, հերոսական գործողությունների, մաքառումների մասին, ճանաչելու հայրենի բնաշխարհը։Իհարկե, պատմավեպը…Ես արժևորում եմ պատմավեպի միջոցով հայրենասիրության դաստիարակումը։

Յուրաքանչյուր ժողովուրդ իր ճակատագրի կրողն է, պատմական վեպը՝ այդ ժողովրդի պատմական կյանքի նկարագիրը։ Հայ ժողովրդի համար շատ են պատմության կրկնվող էջերը, տարբեր ժամանակներում նրա առաջ ծառացած միևնույն խնդիրները, որոնց լուծումները ժամանակի մտածողները տալիս են՝ դիմելով պատմական անցյալին։

Պատմավեպի ուսումնասիրությունը դառնում է նպատակ. նպատակ այն բանի, որ երեխային սիրել տա իր սեփական հայրենիքը, իր բնությունն ու պապերի արյունով պահած հողը:

«Մեր նախնիները մեզ կտակեցին հայրենիք և ազգ: Արյամբ պահպանեցին նրանք մեր ազատությունը, հայրենիքը և մեզ հրաման թողին անբասիր պահել այդ սրբությունները: Պաշտպանե՛նք մեզ կտակած գանձերը: Մեռնենք, չտանք թշնամուն»:

Այս խոսքերը զուտ ընթերցելու համար չեն: Սա հայ նոր սերնդի մեջ ազգային արժանապատվությունն արթնացնելու բանաձևն է:

Պատմավիպասանն իր առջև խնդիրներ է դնում նպատակին հասնելու համար: Այդ խնդիրները կարող են բազմազան լինել: Ես կփորձեմ շարադրել այն հատկանիշները, որոնք, ըստ իս, մեծ դեր են խաղում ազգապահպանման գործում:

Առաջնային եմ համարում մեր բնաշխարհին լավագույնս ծանոթ լիները: Դպրոցական էքսկուրսիաները, որոնք նախատեսված են եղել ծառայելու այդ նպատակին, մեր օրերում այլ ուղղվածություն են ձեռք բերել: Չես կարող հայրենրքդ սիրել, եթե չես ճանաչում այն: Պատմավեպերում նկարագրված մեր կախարդական բնաշխարհին կարելի է ծանոթ լինել ինչպես անմիջական, այնպես էլ միջնորդավորված՝ դասարանում համապատասխան դասեր կազմակերպելով:

Ոչ պակաս կարևոր է սեփական ժողովրդի մշակույթին, ավանդույթներին, տոներին ծանոթ լինելը: Դա հնարավորություն է տալիս ճանաչելու, գնահատելու այն ազգին, որի ներկայացուցիչն ես դու, ձևավորելու նրա հավաքական կերպարը: Համեմատելով այլ ազգերի մշակույթի հետ՝ հպարտորեն կարելի է տեսնել հայ ժողովրդի մարդասիրությունն ու բարությունը, ստեղծագործ ոգին, արարող ջանքն ու ապրելու համառությունը:

Պատմավեպը կարող է հնարավորություն տալ մեզ՝ մանրակրկիտ ծանոթանալու մեր կենսագրությանը:

Կարևոր է, որ հայ երիտասարդը հասկանա, վեր հանի ու դատապարտի հայի համար կործանարար չարիքը.

«Մենք հայ ենք, Աստծո անեծքը դրված է մեր ճակատի վրա. մենք մեր ձեռքով մեր տունը քանդում ենք: Անմիաբանությունը, երկպառակությունը, նախանձը,

թշնամությունը և հազար ու մի այս տեսակ չարություններ շատ ժամանակներից բույն են դրել մեր հոգու մեջ, և մենք կրում ենք այդ մեղքերի պատիժը»։

Հայրենիքը բացարձակ է, անձնականը՝ մասնավոր։ Ով մեղանչում է բացարձակի դեմ, կատարում է բարոյական աններելի շեղում, որն արժանի է պատժի։

Իրենց անձնական շահերը հայրենիքի շահերից վեր դասելը հայկական իրականության մեջ մշտապես հանգեցրել է անմիաբանության, անհամաձայնության իշխանական տների և թագավորների, եկեղեցու և թագավորի նրանց և ժողովրդի միջև։

Այդ անմիաբանությունը հաճախ ընթացել է սոսկալի արյունահեղություններով։ Արտաքին թշնամուց առավել վնասել է հայն ինքն իրեն։

Ահա այսպիսի ծանր իրավիճակներում են հաճախ հայ նվիրյալները փնտրել և գտել ազգի պահպանման համար ուղիներ ու տվել նվիրական լուծումներ։

Հարկ եմ համարում ներկայացնել մի դասի օրինակ։

Մեկ դասաժամ՝ հայ գրականությունից

Դասի թեման- Ազգապահպանության ուղիները Ռաֆֆու վեպերում

Նպատակը- Կարևորել ազգային արժեքների պահպանումը, վեր հանել ազգի գոյատևման ուղիները։

Կառուցվածքը- Դասի խթանման փուլը կընթանա ընտրված հարցերի միջոցով, որն էլ կհանգեցնի վեպերի միջև եղած ընդհանուր գաղափարին։ Այս փուլին կտրամադրվի 10րոպե/հարցերի հետ տալիս եմ ակնկալվող պատասխաններից/։

1.Երբ է գրողն հայացքն ուղղում դեպի պատմական անցյալ?

Եթե գրողը ներկայի մեջ չի գտնում իր խնդիրների տիպարները, նա մտնում է պատմության խորքը և ժամանակների հնությունից դուրս է կոչում իր ցանկացած հերոսներին և նրանց պատկերները՝ իրենց վսեմ գերծերի նկարագիրներով, դնում է ներկա սերունդների առջև, որ նրանցից օրինակ առնեն և նրանց նման լինեն։

2.Ինչ է, ըստ Ռաֆֆու, ժողովրդի անցած պատմությունը?

“Պատմությունը մի վարդապետարան է, մի դասարան է, որի մեջ ապագա սերունդը կրթվում է՝զգուշանալով իր նախահարց սխալներից և հետևելով նրանց լավ գործերի

օրինակին”: Ուրեմն, ըստ Ռաֆֆու, պատմությունը ոչ միայն անցյալի հայելին է, այլ նաև ներկայի խորհրդատուն:

3.Ինչ է գրում Ռաֆֆին պատմավեպի մասին?

“Պատմական վեպը մի ժողովրդի պատմական կյանքի նկարագիրն է: Նա պատկերացնում է յուր մեջ, թե որպես ապրել է և որպես գործել է մի ժողովուրդ, պատկերացնում է նրա բարքը, վարքը, սովորությունները, պատկերացնում է նրա մտավոր և բարոյական հատկությունները”:

4. Ինչ է պահանջվում մեր ժողովրդից?

Տերը լինել մեր ժառանգությանը, սիրել հայրենիքը, իսկ հայրենասեր չեն լինում միայն կռվելով. հարկավեր է տերը լինել այն ամենին, ինչը ժառանգել ենք մեր նախնիներից:

Հաջորդ փուլի համար դասարանը կբաժանվի 3խմբի և կստանա հետևյալ հանձնարարությունը.

1-ին խումբ- Հիմնավորել ազգապահպանման գաղափարները՝ ըստ “Կայծեր” վեպի:

2-րդ խումբ- //----------// ըստ “Խենթը” վեպի

3-րդ խումբ- //----------// ըստ “ Սամվել” պատմավեպի:

Պատրաստվելուն կտրվի 5րոպե, որից հետո խմբերը կներկայացնեն իրենց մտքերը՝ նախապատրաստելով կշռադատման փուլին/ գրատախտակին կգրվեն ուղիները:

“Կայծերի” հերոսները ազգի փրկության ծրագիրը սկսում են *հայրենի բնաշխարհի մարդկանց, նրանց կենցաղի, վարքուբարքի* ուսումնասիրությունից. “Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող ճշմարտացի սիրել նրան”:

Ազատության գազափարը այն հիմնակետն է, որով առաջնորդվում են հերոսները: Որպեսզի անհատը կարողանա զգալ ի ծնե իրեն տրված ազատության բնազդը, հարկավոր է վերափոխել հասարակությունը՝ հեղափոխությամբ: Ռաֆֆին իր հերոսների միջոցով կրկին կարևորում է ազգային ինքնագիտակցությունը փոխելու *համար ընտանեկան նոր դաստիարակության, կրթության, դպրոցի, գրականության դերը*:

Ազատագրական պայքարի ծրագիր է ներկայացվում “Խենթը” վեպում:

Ռաֆֆին ազգի փրկությունը տեսնում է միայն զինված ապստամբության մեջ, որին հարկավոր էր նախապատրաստվել: Ժողովուրդը ազատություն կարող է ձոռք բերել միայն անձնազոհության և համառ պայքարի միջոցով:

Ռաֆֆին համոզված է, որ հայրենիքը անհամեմատելի ու բացարձակ արժեք է, որի ֆիզիկական ու հոգևոր գոյության նկատմամբ որևէ ոտնձգություն ու դավաճանական քայլ պետք է անպայման պատժվի:

“Սամվել” պատմավեպում ազգապահպանման խորհուրդը կարելի է տեսնել “Երեք երիտասարդ ուժեր” գլխում, ուր Սամվելը, Սահակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը վերլուծում են ստեղծված իրավիճակը և ելքեր փնտրում: Այստեղ զուգահեռ է անցկացվում "Վերք Հայաստանի” վեպի այն գաղափարին, որ ազգի կենսունակությունը որոշվում է երեք հատկանիշներով՝ ֆիզիկական ուժ, հոգևոր կարողություն և բարոյական միասնություն:

Խմբերը միմյանց տալիս են հարցեր և կատարում փոխադարձ գնահատումներ:

Դասի ավարտին տրվում է տնային հանձնարարություն՝ “Ինչ վեպ կգրեի մեր ժամանակներում” խորագրով: